

ՀԱՅ-ՌՈՒՒ ՍԱԿԱՆ ՀԱՄԱԼ ՍԱՐԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ ԱՐԱՄԻ

ՀԱՆՐԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԺԲ.00.03 - Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտություններին կից գիտական աստիճանի հայցման ատենախոսություն  
ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ- 2017

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

ХАЧАТРЯН МИКАЕЛ АРАМОВИЧ

ГРАЖДАНСКО-ПРАВОВОЕ РЕГУЛИРОВАНИЕ  
ПУБЛИЧНОЙ СОБСТВЕННОСТИ  
В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.03 – Частное право (гражданское, торговое (коммерческое), международное частное, семейное, трудовое право, право социального обеспечения)

ЕРЕВАН - 2017

Ատենախոսուող թեման հաստատվել է Յայ -Ռուսական համալսարանում

Գիտական ղեկավար՝

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Տ.Կ. Բարսեղյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝  
գիտությունների

իրավաբանական

դոկտոր, պրոֆեսոր **Լ.Վ. Կոզլովա**  
իրավաբանական գիտությունների  
թեկնածու **Լ.Ա. Սարգիզով**

Առաջատար կազմակերպող թեման՝

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայություն,  
սոցիոլոգիայի և իրավունքի  
ինստիտուտ

Ատենախոսուող թեման պաշտպանությունը կայանալու է 2017 թվականի հունիսի 1-ին՝ ժամը 11:00-ին, Յայ -Ռուսական համալսարանում գործող ՀՀԲՈՅ-ի իրավագիտություն 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051, ք. Երևան, Հովսեփ Էմինի 123):

Ատենախոսուող թեմանը կարելի է ծանոթանալ Յայ -Ռուսական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2017 թվականի մայիսի 30-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
իրավաբանական գիտությունների թեկնածու,

**Ջ. Յ. Յայրապետյան**

Тема диссертации утверждена в Российско-Армянском университете

Научный руководитель:

доктор юридических наук, профессор  
**Т.К. Барсесян**

Официальные оппоненты:

доктор юридических наук, профессор  
**Н. В. Козлова**

кандидат юридических наук  
**Л.А. Саргизов**

Ведущая организация:

**Институт философии, социологии и права  
НАН РА**

Защита состоится 1-ого июля 2017 года в 11<sup>00</sup> часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции ВАК РА при Российско-Армянском университете (0051, г. Ереван, ул. Овсепя Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки Российско-Армянского университета.

Автореферат разослан 30-ого мая 2017 года.

Ученый секретарь специализированного совета,  
кандидат юридических наук

**Дж. А. Айрапетян**

# ԱՏԵՆԱԽՈՍՈՒ ԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒ Ր ԲՆՈՒ ԹԱԳԻՐԸ

**Յեռագոտու թյան թեմայի արդիականությունը:** 1991 թվականին սոցիալիստական կարգերի փլուզումով Հայաստանում փոխվեց մարքս-լենինյան աշխարհընկալումը: Սկսվեց Հայաստանի երրորդ հանրապետության «շինարարությունը»՝ մասնավոր իրավունքի և մարդու իրավունքների հարգանքի հիման վրա՝ վերաիմաստավորելով «սեփականություն» և «սպամանագիր» հասկացությունները: Կորցնելով մենաշնորհային դերը՝ հանրային սեփականությունն իրեն առնչվող խնդիրներով մղվեց երկրորդ պլան, ինչի արդյունքում դրան կատամբ հետագոտական հետաքրքրությունն սկսեց անկում ապրել:

Ազատական սկզբունքների լույսի ներքո շարադրված նոր քաղաքացիական օրենսդրությունն է «հանրային սեփականություն» հասկացությունը տեղ չգտավ, ուստի, դրա հետ կապված հարաբերությունները պատռած իրավակարգավորումներ չստացան: Թեև քաղաքացիական օրենսգրքում սեփականության իրավական նոր կարգավորումները մեկ քայլ առաջ էին սոցիալիստական կարգերի ժամանակ գործող կարգավորումներից, այնուամենայնիվ, դրանք բավականաչափ ճկուն չէին տնտեսության զարգացման դինամիկայի հետ համահունչ լինելու համար: Սեփականության իրավունքի սահմանման, սեփականության ձևերի տարանջատման, սեփականատիրոջ իրավագործության և սեփականությանն առնչվող գրեթե բոլոր հարցերը մնում են խնդրահարույց: Իր հերթին, սեփականության, այդ թվում՝ հանրային սեփականության առանձին տեսակների համար իրավական առանձին ռեժիմներ չսահմանելը հանգեցրին կառավարման հարցերի անորոշությանն ու հանրային գույքի օգտագործման չարաչափումներին ու խախտումներին, ինչի արդյունքում զգալիորեն վնասվեց հանրային գույքը:

Թեմայի արդիականության ունեն ընդհանուր առմամբ սպամանավորված է տնտեսական համաշխարհային ճգնաժամով, որի պատճառով, ինչպես հետո գնահատել են արևմուտքի ակնավոր տնտեսագետները, սեփականության վերաբերյալ հետադիմական հայացքներն էին: Մինչև 20-րդ դարի երկրորդ կեսը անգլոամերիկյան իրավական համակարգի երկրներում դատարանները սեփականության վերաբերյալ վեճերը լուծում էին՝ հիմք ընդունելով Ջ.Լոքի սեփականության դոկտրինայի սահմանումը: Դրանից հետո իրավակիրառներն առաջնորդվում էին Նոբելյան մրցանակի դափնեկիր Ռ.Քոուզի սեփականության իրավունքի հայեցակարգով, որը ներկայումս դատարանների կողմից գնահատվում է անկենսունակ: Իր հերթին, ռոմանոգերմանական իրավական համակարգում հայտնի հռոմեական եռամիասնության ավանդույթները նույնպես վաղուց անկենսունակ են ճանաչվել: Այս առումով սեփականության իրավունքի նոր հայեցակարգերի որոնումը ավելի քան այժմեական է:

Սոցիալիստական՝ սեփականության պետականացման դարաշրջանից և դրան հաջորդած սեփականության լայնածավալ մասնավորեցումներից հետո կանգ ենք առել երկու ծայրահեղական ժամանակաշրջանների ավարտի սահմանագծին: Այս էթերևս պատճառով, որ եկել է պահը մոտավոր անցյալին անաչառ գնահատական տալու, այդ

երկու պատմական ժամանակաշրջանները վերընթերցելու, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ վերլուծելու, արդյունքներն ու դասերն ամփոփելու, համապատասխան հետևություններ անելու և դասեր քաղելու համար: Այս հանգամանքով է պայմանավորված նոր հարացույցերի և սկզբունքների լույսի ներքո հանրային սեփականության հարցերը քննարկելու անհրաժեշտությանը:

Թեմայի արդիականությանը պայմանավորված է նաև գործնականում հանդիպող բազմաթիվ խնդիրներով: Դրանցից են՝ անկախացման տարիներին պետական գույքի մասնավորեցման փորձը, պետական գույքի օգտագործման և կառավարման խնդիրները, ինչպիսին էին, օրինակ, հասարակական ինչեղությանը և ստացած՝ Գառնիում հարսանեկան խնջույք անցկացնելու համար թույլ տվող շրջան ստանալու, Չվարթնոցում նկարահանվելու համար պետական կազմակերպության կողմից վճարներ գանձելու, ՀՀ կենտրոնական բանկի կողմից ոսկու պահուստային ֆոնդը վաճառելու, Սևանա լճի ամփամերձ տարածքների մասնավորեցման, Կասկադում վարձակալի կողմից առանց նախնական թույլ տվող շրջան նկարահանումներ կատարելու արգելքի վերաբերյալ, մշակութային օջախներում առևտրային այլ գործունեություն ծավալելու, հասարակության անմիջական օգտագործման համար նախատեսված մայթերի ու այգիների օտարման հարցերը:

Թեև հետխորհրդային Հայաստանում շուկայական վերափոխումները մեկնարկից անցել է գրեթե երեք տասնամյակ, սակայն դեռևս մշակված չեն հանրային սեփականության օրենսդրական, այդ թվում՝ քաղաքացիաիրավական կարգավորման տեսական-մեթոդաբանական հիմնադրույթներն ու սկզբունքները: Մինչդեռ, հանրային սեփականության իրավունքի քաղաքացիական իրավական կարգավորման հարցերը կարևոր են թե՛ տեսական, թե՛ գործնական տեսանկյունից, այնուհանդերձ, այդ հարցերի ներկայիս գիտական հետազոտման մակարդակը մնում է անբավարար: Հայրենական քաղաքացիական իրավունքի մասնագետները հանրային սեփականության՝ պետական և համայնքային սեփականության առանձին հարցերին անդրադարձել են բուհական դասագրքերի կամ առենախոսությունների շրջանակներում:

Ասվածին հավելենք նաև այն, որ մի շարք օրենսդրական ոլորտներում, այդ թվում՝ Հայաստանի քաղաքացիական օրենսդրությանը, ընթացող օրենսդրական հիմնարար փոփոխությունների շրջանակներում սեփականության իրավունքի, և հատկապես հանրային սեփականության հարաբերությունները կարգավորող նորմերի մասով փոփոխությունների որևիցե առաջարկ արված չէ: Այնինչ, անկախության տարիների ընթացքում հանրային սեփականության կառավարման՝ աչքի տակ ունեցած բազմաթիվ օրինակները հստակ ցույց են տալիս, որ հանրային սեփականության իրավունքի քաղաքացիաիրավական կարգավորման հիմքերը պահանջում են նոր ու նորովի հարցարդու մներ և լուծումներ: Այս առումով առենախոսությունում և կատարված հետազոտությանը և ներսերն ու առաջարկությունները պիտանի կլինեն քաղաքացիական օրենսդրության փոփոխությունների ընթացիկ աշխատանքների համար:

Վերոհիշյալ հանգամանքներով է պայմանավորված թեմայի ընտրությանը ունենուլ արդիականությունը:

**Ատենախոսության թեմայի մշակվածության աստիճանը:**  
Հայաստանի Հանրապետությունում հանրային սեփականությունը՝ որպես ինքնուրույն ինստիտուտ քաղաքացիաիրավական կարգավորման տեսանկյունից ուսումնասիրված չէ: Այն հիմնականում քննարկման առարկա է դառնում կամ մասնավոր սեփականության իրավունքի կամ հանրային սեփականության ձևերի շրջանակներում: Հանրային սեփականության իրավունքի հարցերին որոշակիորեն անդրադարձել են Տ. Բարսեղյանը, Վ. Նազարյանը, Գ. Հարությունյանը, Վ. Մովսիսյանը, Ս. Քրմոյանը, Ն. Կարապետյանը և այլ ոք:

Ռուսաստանի Դաշնությունում հանրային սեփականության հարցերը առավելապես քննարկվել են սովետական իրավաբանների կողմից, մասնավորապես՝ խոսքը Ա. Վ. Վենեդիկտովի, Ն. Ս. Բրատուսի մասին է:

Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ փորձ է կատարվում առանձին ատենախոսության մակարդակով քննության ենթարկել հանրային սեփականության իրավունքի քաղաքացիաիրավական կարգավորման հարցերը:

**Ատենախոսության ուսումնասիրման օբյեկտը և առարկան:**  
Հետազոտության օբյեկտը հասարակական այն հարաբերություններն են, որոնք կապված են հանրային սեփականությունը տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու հետ, իսկ հետազոտության առարկան՝ քաղաքացիաիրավական այն նորմերն են, որոնք կարգավորում են այդ հարաբերությունները:

**Ատենախոսության նպատակներն ու ինդիկատորը:** Թեկնածուական ատենախոսության նպատակը հանրային սեփականության իրավունքի ուսումնասիրությունն է՝ որպես ինքնուրույն ինստիտուտ, հանրային սեփականության իրավունքի օրենսդրական կարգավորման ուղղություններին, ձևերին և օրինաչափություններին ուսումնասիրության ու այդ օրենսդրությունը կատարելագործելու նպատակով առաջարկություններին մշակումը:

Ատենախոսության հիմնական նպատակը հանրային սեփականության իրավունքի հասկացության ներմուծումն է հայկական իրավագիտության մեջ: Այս առումով ատենախոսության նպատակը ճանաչողական է և ունի գոյաբանական գործառնություն: Հանրային սեփականությանը համաչափ և օրենսդրությանը հայտնի պետական և համայնքային սեփականություններն ամբողջացնող հասկացությունն իրանհատական և սոցիալական գործառնություններով և տարբերակված դրսևորումներում: Հանրային սեփականության ուսումնասիրման և իրավական կարգավորման տեսանկյունից կարևորվում են հանրային սեփականության տեսանկյունի տարբերակման հիմքերի հստակեցումն ու տեսանկյունի սահմանումը:

Ատենախոսության մեջ նպատակ ունենք նաև ներկայացնել մեր առաջարկները՝ հանրային սեփականության հարաբերությունները կարգավորող ՀՀ գործող քաղաքացիական օրենսդրությունում անհրաժեշտ փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

Ներկայացված նպատակներն իրագործելու համար հեղինակն իր առջև խնդիր է դրել՝

1. վերլուծել հանրային սեփականությանը՝ որպես ինքնուրույն ինստիտուտ.

2. ուսումնասիրել հանրային սեփականության տեսակներն ու գործառույթները.

3. հետազոտել հանրային սեփականության իրավաբանական իրավունքի տարրերն ու զարգացման օրինաչափությունները.

4. վերլուծել հանրային սեփականության իրավունքի իրավական կարգավորման զարգացման միտումները.

5. վերլուծել հանրային սեփականության իրավունքի ձեռքբերման և դադարման կարգավորման ամանձնատկությունները, օրենսդրական բացերն ու թերությունները:

**Ատենախոսության տեսական հիմքը:** Ատենախոսության տեսական հիմքը իրավունքի փիլիսոփայության և տեսության վերաբերյալ աշխատություններն են: Խոսքը, մասնավորապես, Ջ. Լոքի, Ֆ. Կ. Մակինիի, Վ. Նեյսեսյանցի, Վ. Շերշենկիչի և այլոց աշխատությունների մասին է, ինչպես նաև հատուկ մասնագիտական գրականության: Իրավագիտական գրականության նույն հանրային սեփականության հարցերին անդրադարձել են Մ. Օրիոն, Ֆ. Յոլկան (Ֆրանսիա), Ռ. Շտրեյբեր (Գերմանիա), Վ. Կ. Անդրեև, Վ. Սկլոպսկին, Ե. Ա. Սուխանովը, Վ. Ա. Վենեդիկտովը, Վ. Դ. Մազանը, Ա. Վ. Վինիցկին (Ռուսաստան) և այլն:

Ատենախոսությունում բավականաչափ տեղ են ք հատկացրել սեփականության իրավունքի վերաբերյալ պրոպագանդային երկրներում, մասնավորապես՝ Ֆրանսիայում և Գերմանիայում, տարածում ունեցող տեսական մոտեցումների և օրենսդրական կարգավորումների քննարկմանը: Հիշյալ երկրների ընտրությունը պայմանավորված է նրանով, որ նշված երկրները պատմականորեն օրենսդրական կարգավորման առաջնեկներն ու առաջատարներն են: Խոսքը նախ և առաջ Ֆրանսիայում հանրային սեփականության իրավունքը կողմնակիցացնելու մասին է: Բացի այդ, Ֆրանսիայում ավանդաբար իրավունքը բաժանվում է հանրայինի և մասնավորի: Իր հերթին, Գերմանիան իր իրավական կարգավորման համակարգով Հայաստանին ամենամոտեվորպական երկրներից է, որտեղ ինչպես և Հայաստանում, հանրային սեփականության հարաբերությունները գլխավորապես կարգավորվում են մասնավոր իրավունքի նորմերով և լրացվում են վարչական իրավունքի նորմերով:

**Ատենախոսության նորմատիվ հիմքը:** Ատենախոսության համար նորմատիվ հիմքերն են ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, «Հայաստանի Հանրապետության սեփականության մասին», «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքները, քաղաքացիական հարաբերությունները կարգավորող այլ օրենքներն ու օրենքի նախագծերը և այլն: Աշխատությունում լայնորեն օգտագործվել են նաև պրոպագանդային երկրների իրավական ակտերը, ինչպիսին են Ռուսաստանի, Ֆրանսիայի, Գերմանիայի և այլ երկրների

սահման դրուելու ներքո և քաղաքացիական իրավունքի աղբյուրները:

**Յետադուռայան մեթոդաբանական հիմքը:** Մեթոդաբանության տեսանկյունից լայնորեն կիրառվել են հետազոտման պատմական, համեմատական և դիալեկտիկական մեթոդները:

**Յետազոտայան գործնական հիմքը:** Յետազոտայան գործնական հիմքը կազմել են Յայաստանի Հանրապետության և արտասահմանյան երկրների դատական արտիտիկան, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի, պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների գեկոլյցներն ու հաշվետվության ներքո:

**Առեւտախոսության գիտական նորույթը:** Առեւտախոսության գիտական նորույթը պայմանավորված է հանրային սեփականության հարցերի համակարգային ուսումնասիրության մը: Առեւտախոսությունում տրվում է հանրային սեփականության՝ որպես ինքնուրույն ինստիտուտի, դրա առանձին դրսևորումների և գործառույթների հասկացության ներքո, որոնք հայտնի չեն հայրենական իրավագիտությանը, ուսումնասիրվում են հանրային սեփականության միասնականացված իրավական կարգավորման անհրաժեշտությանը, սուբյեկտների, օբյեկտների և բովանդակության հիմնախնդիրները, ինչպես նաև հանրային սեփականության իրավունքի ձեռքբերման ու դադարման առանձնահատկությունները:

Առեւտախոսության գիտական նորույթն արտահայտվում է պաշտպանության երկայացվող հիմնական դրույթներում:

Առեւտախոսության նպատակների և խնդիրների իրականացման արդյունքում ձևավորված գիտական եզրահանգումների հիման վրա **պաշտպանության երկայացվող հիմնական դրույթները** հետևյալներն են.

1. ՀՀ քաղաքացիական օրենսդրությանը, կարգավորելով պետական և համայնքային սեփականության ներքո հետկապված հարաբերության ներքո, «հանրային սեփականությանը» ընդհանուր եզրը չի գործածում և չի կարգավորում հանրային սեփականության հետ կապված հարաբերության ներքո՝ որպես իրավունքի ինքնուրույն ինստիտուտ: Հաշվի առնելով Յայաստանի պանդեկտային իրավական համակարգի երկիր լինելու հանգամանքը, որին բնորոշ են վերացարկումները, և նկատի ունենալով «մասնավոր սեփականությանը» համարժեք հասկացության ունենալու անհրաժեշտությանը՝ առաջարկում ենք ազգային օրենսդրության ուսումնառության մեջ դնել **«հանրային սեփականությանը» հասկացությանը**՝ դրա ներքո հասկանալով գույքի նկատմամբ հանրային իրավական կազմավորումների գույքային իրավական իշխանությանը, համատեղ սեփականության որակական այլ մակարդակի դրսևորում, որով ճանաչվում է սեփականության իրավունքի յուրաքանչյուր սուբյեկտի մասնաբաժինը իրավագործության ներքո իրականացման նկատմամբ: Այս եզրը հնարավորություն է կտա համակարգել և խմբավորել հանրային սեփականության հարաբերության ներքո կարգավորող իրավական ակտերը մեկ իրավական ակտում և ընդհանուր սկզբունքների լույսի ներքո՝ դրանով իսկ ապահովելով իրավական որոշակիության սկզբունքը՝ բարձրացնելով հանրային

սեփականությունը, իրավունքի արդյունավետ իրավական պաշտպանությունը, բացառելով իրավակարգավորումների կրկնությունները, հակասություններն ու անհամաձայնությունները, ինչպես նաև օրենսդրական բացերը:

2. ՀՀ քաղաքացիական օրենսդրությունում սեփականություն հարաբերությունների իրավական կարգավորման հիմքում սեփականության սուբյեկտիվ իրավունքի գաղափարն է: Սեփականություն իրավունքը (ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային) անհատական գործառույթներին գույքահեռ իրականացում է նաև սոցիալական գործառույթներ: Սոցիալական գործառույթի ծավալն ու բնույթը կախված է ինչպես սեփականություն իրավունքի սուբյեկտի ամանձնատկություններից, այնպես էլ գույքի հասարակական նշանակություններից և այլ փոփոխվող հանգամանքներից: Այս առումով ՀՀ Սահմանադրությունում փոփոխությունների տրամաբանությամբ սեփականություն իրավունքի սոցիալական գործառույթների փոփոխական ծավալի հարաբերականությունը մասնավոր իրավունքում ապահովելու համար առաջարկում ենք քաղաքացիական օրենսգրքի 23-րդ գլխում սահմանել պայմանական կամ փոխակերպվող պարտավորությունների տեսակը՝ որպես պարտավորություն, որի իրականացումը կախվածություն մեջ է դրված ապագայից և անհայտ ժամանակում վրահասնող որոշակի իրադարձություններից:

3. Գործող քաղաքացիական օրենսդրությունը հանրային իրավական կազմավորումներին պատկանող գույքային հարցերը կարգավորում է՝ հիմք ընդունելով սեփականության ձևերն ըստ սուբյեկտների՝ պետական և համայնքային ամանձնացնելը: Հիմք ընդունելով անկախության տարիներին հանրային գույքի կառավարման փորձի արդյունքները՝ անհրաժեշտ ենք համարում հանրային սեփականության տեսակներն ամանձնացնել ըստ օբյեկտների՝ օգտագործման նպատակային հատկացվածություն և միևնույն օբյեկտի նկատմամբ բազմաթիվ սուբյեկտների միջև իրավունքների և պարտականությունների բաշխվածություն՝ ըստ այդմ ամանձնացնելով հանրային սեփականության՝ հասարակական, վարչական, ֆինանսական և այլ տեսակները:

4. Հանրային սեփականության իրավունքի սուբյեկտներն են պետությունն ու համայնքը, իսկ դրանց մարմինները ձեռք բերում են իրավունքներ, ստանձնում են պարտավորություններ և կրում են պատասխանատվություն և համապատասխանաբար պետության և համայնքի անունից: Հանրային սեփականության իրավունքի սուբյեկտների իրավական վիճակի վերաբերյալ իրավական նորմերի համեմատական վերլուծության արդյունքում պարզվել է, որ հանրային իրավական կազմավորումների իրավական բնույթի վերաբերյալ մոտեցումները իրավական ակտերում տարբերվում են, ինչն իր հերթին խոչընդոտում է սեփականության իրավունքի կառավարման հարցում միասնականացված կարգավորումների ու նենսպուն: Այս առումով, պետական կառավարման մարմիններին և պետական կազմակերպությունների սեփականության իրավունքի վերաբերյալ դրույթներն անհրաժեշտ է վերանայել այնպես, որ վերջիններս չվերածվեն հանրային սեփականության ինքնուրույն սուբյեկտների: Դրա համար անհրաժեշտ է պետական կամ տեղական



ի նքնակ առավարման մարմիններին գույքը հատկացնել օրենքով կամ վարչականակ տերով, իսկ պետական կազմակերպություններին քաղաքացիաիրավական գործարքներին, իսկ պետական մարմիններին դեպքում իրավականակ տերի միջոցով: Այս տրամաբանությամբ՝ ՀՀ կենտրոնական բանկը, իրենույնամբ, պետական վարչակազմակերպական մարմին է, ուստի հանրային սեփականության իրավունքի նքնուրույն սուբյեկտ է, հետևաբար, պետական գույքի նկատմամբ Կենտրոնական բանկի գույքային իրավունքներին հարցը պետք է կարգավորել օրենքով, ենթաօրենսդրական նորմատիվ և/կամ վարչականակ տով:

5. Գործող օրենսդրությամբ պետական կազմակերպություններին սեփականությանը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող գույքից: Նմանօրինակ դրույթները նախատեսվելու պայմանավորված է այն հանգամանքով, որ «որպես սեփականության ունեռն առանձնացված գույք ունենալը» դիտվում է որպես իրավաբանական անձի հատկանիշ և գոյության նախապայման: Իրավաբանական անձանց հատկանիշների համակարգային վերլուծության արդյունքում պարզվել է, որ սեփականության իրավունքով գույք ունենալն իրավաբանական անձի իրավասության եկտուության ճանաչման արդյունք է, այլ ոչ թե գոյության պարտադիր հատկանիշ: Այդ իսկ պատճառով հանրային սեփականությանը վարչականակ տով կարճականակ տով հնարավոր մասնավորեցումից հետո պահելու և հանրային գույքի կառավարման արդյունավետության բարձրացման նկատառումներից ելնելով՝ առաջարկում ենք գույքը պետական կազմակերպություններին ամրացնելու փոխարեն նախատեսել հանրային սեփականությանը պետական կազմակերպություններին հավատարմագրային կառավարման հանձնելու դրույթը՝ ըստ այդմ համապատասխան փոփոխության ունեռն կատարելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» և «Պետական կառավարչականակ հիմնարկների մասին» ՀՀ օրենքներում:

6. Հանրային գույքի տիրապետումն ու օգտագործումն իրականացնում են հասարակության անդամներն ու ղղակիորեն կամ անուղղակիորեն՝ հանրային իշխանության մարմինների միջոցով: Օրենսդիրը չի սահմանել տիրապետման և օգտագործման առանձնահատկության ունեռնը հանրային իրավական կազմավորումների դեպքում, մինչդեռ այդ առանձնահատկության ունեռնը օբյեկտիվորեն գոյություն ունեն: Որպեսզի այդ առանձնահատկության ունեռնը հնարավոր լինի սահմանել և կիրառել, առաջարկվում է, նախ, գույքը տիրապետելու և օգտագործելու գույքային իրավունքներին ինքնուրույն կենսունակության տալ նաև սեփականատիրական հարաբերության ունեռնից դուրս՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի չորրորդ բաժնում հստակեցնելով սեփականատիրոջ գույքը տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավագործության ունեռնի օրենսդրական բովանդակության ունեռնը: Մասնավորապես՝

- տարբերակել «տիրապետման» հետևյալ տեսակները՝ «տիրապետումը»՝ որպես սեփականատիրոջ գույքը տիրապետելու

իրավագործություն, որպես տիրապետման տիրոջ սային իրային իրավունք և որպես գույքը փաստացի տիրապետելու իրավաբանական փաստ.

• գույքն օգտագործելու իրավունքի սահմանումը լրացնել «գույքի տնտեսական շահագործումը» արտահայտությամբ՝ ընդլայնելով օգտագործման իրավունքի բովանդակությունը.

• հանրային գույքի պարագայում գույքի կառավարումը տնօրինելուց ինքնուրույն իրավագործություն է, որը բովանդակում է հանրային գույքն օգտագործելու և դրան կատարմամբ վերահսկողություն սահմանելու հնարավորությունը:

7. Հասարակության և պետության կարիքների համար գույքն օտարելը պետական սեփականության իրավունքի ծագման, իսկ մասնավոր, երբեմն էլ համայնքային սեփականության իրավունքների դադարման հիմք է: Հետևաբար, հասարակության և պետության կարիքների համար օտարվող գույքի նկատմամբ ծագում է պետության սեփականության իրավունքը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է վերանայել «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով հասարակության և պետության կարիքների համար սեփականությունը հոգուտ կազմակերպությանն օտարվելու հնարավորությունը (6-րդ հոդվ., 1-ին մ.):

8. Ձեռքբերման վաղեմությունը հանրային սեփականության իրավունքի և՛ ձեռքբերման, և՛ դադարման հիմք է: Համապատասխան նորմերի համեմատական վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ ՀՀ քաղ. օր-ի 187-րդ հոդվածի գործողությունը տարածվում է նաև հանրային գույքի վրա: Որպեսզի որոշակիորեն կանխվեն ձեռքբերման վաղեմության միջոցով հանրային սեփականության իրավունքի չարաշահումները, հնարավոր ենք համարում հանրային գույքի նկատմամբ գույքային իրավունքների՝ վաղեմությամբ ձեռքբերման համար նախատեսել հավելյալ պայմաններ, ինչպիսին են՝ գույքի տիրազուրկ, հողի անմշակ լինելու, ձեռքբերողի գույքային վիճակի, ձեռքբերվող գույքի չափերի և սոցիալական պետության սկզբունքին համապատասխան այլ վերաբերելի նախապայմանները:

**Հետազոտության արդյունքների փորձարկումը:**

Ատենախոսությունը պատրաստվել է Հայ-Ռուսական համալսարանի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարական իրավունքի ամբիոնում, որտեղ և տեղի է ունեցել ատենախոսության նախապաշտպանությունը և գրախոսումը: Ատենախոսության հիմնական դրույթները հոդվածների տեսքով տպագրվել են ՀՀ և ՌԴ իրավագիտական ամսագրերում:

Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները օգտագործվել են մի շարք համալսարանների իրավագիտության դասընթացներում: Ատենախոսության հեղինակը 2009-2010թթ. Հայ-Ռուսական համալսարանում վարել է քաղաքացիական իրավունքի և հողային իրավունքի ու սուսմնական դասընթացների սեմինար պարապմունքներ, 2013-2015թթ. Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանում, 2014-2015թթ. «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ում, իսկ 2013 թվականից մինչ օրս Հայաստանի պետական տնտեսագիտական

համալսարանում դասավանդում է «Իրավագիտություն» ուսումնական դասընթացները:

**Յետադուռայան տեսական և գործնական նշանակությունը:**  
Ատենախոսություն մեջ արտահայտված կարծիքները, առաջարկներն ու մտորումները կարող են օգտագործվել օրենսդրության կատարելագործման աշխատանքների ընթացքում, դատական և իրավահիրառայլ արակտիկայում, քաղաքացիաիրավական հետազարունումնասիրություններին, ինչպես նաև քաղաքացիական իրավունքի գիտության հետազարգարգաման ընթացքում: Ատենախոսությունում կատարված եզրահանգումները հիմնականում կարող են ծարայել գործնական երկու նպատակների: Նախ ներկայացված լույսի ներքո հնարավոր է ճիշտ մեկնաքանել գործող օրենսդրությունը: Խոսքը հատկապես վերաբերում է հանրային սեփականությունը տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կարավարելու հարաբերությունները կարգավորող իրավական նորմերին: Երկրորդ՝ մեր հետևությունները կարող են օգտակար լինել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հետազարկատարելագործման համար:

Ատենախոսության պաշտպանություննից հետո նախատեսվում է «Հանրային սեփականության իրավունք» ուսումնական առանձին դասընթացի դասավանդումը Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Հանրային գույքի կարավարում» մագիստրատուրայի ծրարգրում:

**Ատենախոսության ծավալը և կառուցվածքը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածություննից, երեք գլուխներից, որոնք միասին ներառում են ութ պարագրաֆներ, եզրակացություննից և օգտագործված գրականություն և իրավական աղբյուրների ցանկից:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Ներածություն** մեջ հիմնավորված է ընտրված թեմայի արդիականությունը, ներկայացված են թեմայի մշակվածության աստիճանը, հետազոտության նպատակը և խնդիրները, հետազոտության օբյեկտը և առարկան, հետազոտության աղբյուրագիտական և մեթոդաքանական հիմքերը, գիտական նորույթը, գործնական և տեսական նշանակությունը, ատենախոսության արդյունքների փորձարկումը և դրակարուցվածքը, ձևակերպված են պաշտպանության ներկայացվող դրույթները:

**Ատենախոսության առաջին գլուխը՝** «Հանրային սեփականության էությունը, գործառույթներն ու ձևերը» վերտառությունը, բաղկացած է երեք պարագրաֆներից:

**Առաջին գլխի առաջին պարագրաֆում՝** «Հանրային սեփականությունը՝ որպես ինքնուրույն ինստիտուտ» վերտառությունը, հեղինակն անդրադարձել է հանրային սեփականության էություն տարրերին և եզրահանգել, որ հանրային սեփականության հասկացությունը, լինելով «մասնավոր սեփականությանը» համապատասխանացություն, ընդհանրացնում է ՀՀ քաղաքացիական օրենսդրությունում առկա պետական սեփականություն և համայնային սեփականություն ձևերը: Ըստ

հեղինակի՝ նման վերացարկման գործնական պիտանել իռլոթյունը նրանում է, որ դա հնարավորություն կտա հանրային սեփականության մասնավոր դրսևորումները կարգավորել նույն սկզբունքների հիման վրա՝ ներդաշնակեցնելով դրանց շուրջ ձևավորվող իրավահարաբերությունները կարգավորող դրույթները: Վերլուծելով հանրային սեփականության հայեցակարգերը՝ հեղինակը եզրակացրել է, որ գույքի նկատմամբ գույքային իրավական համատեղ իշխանության որակական այլ մակարդակի դրսևորում է, որով ճանաչելի է սեփականության իրավունքի յուրաքանչյուր սուբյեկտի մասնաբաժինը իրավագործությունների իրականացման նկատմամբ:

**Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում՝** «Հանրային սեփականության իրավունքի սոցիալական գործառույթները» վերտառությունը, հեղինակը վերլուծության է ենթարկել «պարտավորեցնող սեփականության իրավունքի» կոնցեպտը և հանրային սեփականության իրավունքի սոցիալական գործառույթների դրսևորումների առանձնահատկությունները դրա պետական և համայնքային հարթություններում:

Քննարկման առարկա դարձնելով հանրային սեփականության իրավունքի սոցիալական գործառույթները միջազգային, պետական, համայնքային և անհատական հարթությունների տարանջատման համատեքստում՝ հեղինակն անդրադառնում է պետական և համայնքային սեփականության անհատական գործառույթի տարանջատման հարցին: Այս դիտանկյունից հեղինակը վեր է հանել հանրային սեփականությանյան իրավունքի ձևերի «անհատական» գործառույթի գոյությունը՝ պետական սեփականության դեպքում դրա գոյությունը պայմանավորելով միջազգային և մոլեկուլյար համայնքների գոյությամբ, իսկ համայնքայինի դեպքում՝ պետական և անհատականի գոյությամբ: Հանրային սեփականության իրավունքի ձևերի անհատական գործառույթը, լինելով իրենույնով սոցիալական, այլ հզորություն և հարթություն է: Հեղինակը հաջորդիվ անդրադառնում է նաև քաղաքացիական իրավունքում հանրային սեփականության գործառույթների կիրարկման կառուցակարգերի հարցին:

**Առաջին գլխի երրորդ պարագրաֆում՝** «Հանրային սեփականության ձևերը» վերտառությամբ, հանրային սեփականության էությունը լիարժեք բացահայտելու համար հեղինակը վերլուծության է ենթարկել հանրային սեփականության մասնավոր դրսևորումները, ավելի հստակ՝ սեփականության ձևերի բաժանման հիմքի հիմնահարցին և դրանց կարգավորման քաղաքացիաիրավական ասպեկտին: Կարևորելով սեփականության ձևերի բաժանման հարցը որպես սեփականության իրավունքի մեթոդաբանական խնդիր՝ հեղինակը նախապատվություն է տալիս սեփականության ձևի տարանջատման ըստ դրա բովանդակության կամ գործառնական նշանակության իրականացնելուն՝ գործող օրենսդրությանը որդեգրած՝ ըստ սուբյեկտների կամ օրգանական տարբերակման իրականացնելու մոտեցման փոխարեն: Ներպետական օրենսդրության համապատասխան իրավական համապարփակ վերլուծություն կատարելու արդյունքում՝ հեղինակը եզրակացրել է, որ հանրային սեփականության դրսևորումների

գործառնական հիմքով տարանջատման դեպքեր կան, ինչպիսին է, օրինակ, □պետություն կամ համայնքի պարտադիր լիազորություններն իրականացման համար անհրաժեշտ գույքի □ դեպքում, որը արտասահմանյան երկրներում հայտնի է □վարչական սեփականություն □ անվանման ներքո:

**Ասե՛նախտություն երկրորդ գլուխը`** «Հանրային սեփականություն իրավունքի տարրերի առանձնահատկությունները» վերտառություն ամբ, բաղկացած է երեք պարագրաֆներից:

